

ՀՀ Լոռու մարզպետի մոտ կայացած խորհրդակցության

18.06.2019թ.

ք.Վանաձոր

Մասնակցում էին

Գ.Մարկոսյանը - մարզպետի տեղակալ

Վ.Խաչատրյանը - գլխավոր քարտուղարի պաշտոնակատար

Ա.Բեջանյանը, Ա.Մխիթարյանը, Ռ.Հարությունյանը, Ա.Ջանազյանը, Դ.Մանուչարյանը, Ա.Շահվերդյանը, Է.Հախվերդյանը, Ա.Սահակյանը, Ս.Ղուբաթյանը, Հ.Հակոբյանը, Հ.Մկրտչյանը, Ն.Համբարձումյանը - մարզպետարանի աշխատակազմի ստորաբաժանումների ղեկավարներ

Լ.Ասլանյանը - մարզպետի խորհրդական

Լ.Տեր-Սիմոնյան - մարզպետի խորհրդական

Ռ.Խանգադյանը - մարզպետի օգնական

Օր ա կ ա ր գ ու մ`

1.Նախորդ շաբաթվա ընթացքում կատարված աշխատանքների ամփոփում

/Գ. Մարկոսյան, Վ. Խաչատրյան, ստորաբաժանումների ղեկավարներ/

2. Մարզպետարանի ստորաբաժանումների առաջիկա շաբաթվա ընթացքում կատարվելիք աշխատանքների մասին

/Ա.Ղուկասյան/

3. Այլ հարցեր

Հ ա ն ձ ն ա ր ա ր վ ե ց`

1. ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմի ստորաբաժանումների ղեկավարներին`

Տրված յուրաքանչյուր հանձնարարականի վերաբերյալ /այդ թվում նաև դիմումների/ կատարել անհրաժեշտ ուսումնասիրություններ և քննարկումներ այլ ստորաբաժանումների հետ, առաջադրված հարցերին տալ լիարժեք ու օբյեկտիվ լուծումներ, պարզաբանումներ և պատասխանել սահմանված ժամկետներում:

2. ՀՀ Լոռու մարզպետի խորհրդական Լ.Տեր-Սիմոնյանին, մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետի պաշտոնակատար Ա.Բեջանյանին, մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳՄ հարցերով վարչության պետ Դ.Մանուչարյանին`

Մինչև 80% սեփական եկամուտների հավաքագրում ունեցող համայնքների ղեկավարների հետ կազմակերպել աշխատանքային հանդիպում, քննարկել հավաքագրմանը խանգարող հանգամանքները

և պատճառները ու անհրաժեշտ աջակցություն ցուցաբերել պլանային ցուցանիշների ապահովման նպատակով:

 Invalid signature

X 

ԱՄՔԱՆԻՄԱՆ

ԼՈՒՈՒՄԱՐՁՊԵՏ՝

Ա.ՂՈՒԿԱՍՅԱՆ